ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/53

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.05.2018թ. թիվ 03/26-3/8687-18 գրությամբ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00858527) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1590 գրության հիման վրա, 15.05.2018թ. «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1590 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 17.04.2018թ. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում պարզվեց, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 37-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի՝ մանավորապես ուժեղարարի անվանումը նշված չէ:

- 52-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէ արտադրողի կողմից հավաստացված ձևի (MFA) մասին տեղեկությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սակայն «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները չեն շտկվել: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասը, որոշեց մերժել «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի հայտը 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2018թ. թիվ 03/26-3/8687-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Էդգար Ասիկյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/53 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.05.2018թ. թիվ 03/26-3/8687-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.05.2018թ. թիվ ԴՎԱ/1590 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 22.03.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 4, 17.04.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 5 և 07.05.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 6 արձանագրությունները, «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից 19.04.2018թ. Պատվիրատուին ուղղված գրություն-բացատրագիրը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ կապի սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

• N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 22.03.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 4 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է ընթացակարգի 19-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 40-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 09.04.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ն ծանուցվել է:

Ընկերությունը N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ հետևյալ բովանդակությամբ.

- 37-րդ չափաբաժին՝ անվանումը՝ Ռադիոկայաններ ԿԱ տիրույթի ռադիոկայան 1ԿՎ հզորության ուժեղացուցիչով, ապրանքային նշանը՝ VERTEX STANDARD VX-1700, արտադրողի անվանումը՝ VERTEX STANDARD CO. LTD, ծագման երկիրը՝ Ճապոնիա, տեխնիկական բնութագիրը՝ ԿԱ տիրույթի ռադիոկայան 1Կվտ հզորության ուժեղացուցիչով: Հաճախականության տիրույթը՝ ընդունում-0,03-30 Մhg, հաղորդում-1.6 - 30 Մhg, աշխատանքային ռեժիմը՝ SSB, CW, RTTY (FSK), AM, ռադիոկայանի հզորությունը՝ 125 Վտ: Սնուցման աղբյուր՝ մուտքային լարումը փոփոխական հոսանքից 220+- 10% ,հաստատուն հոսանքի ելքային լարումը 13,8Վ, հոսանքի ուժը 25Ա: Հզորության ուժեղացուցիչ 1Կվտ, աշխատանքային հաճախականության տիրույթը՝1.5 -30 Մhg և 48-55 Մhg, ճառագայթման տեսակները AM, FM, SSB, CW, RTTY: մուտքային հզորությունը 100Վտ (110 Վտ առավելագույնը), միջին ելքային հզորությունը 1ԿՎտ,սնուցումը փոփոխական հոսանքի աղբյուրից 200-250Վ, հոսանքի ուժը 15,5Ա, երկրորդային լարումը 48Վ, հոսանքի ծախսը 45Աժամ առավելագույնը, բարձր հաճախականության մուտքային դիմադրությունը 50օհմ, բարձր հաճախականության ելքի դիմադրությունը 50օհ, պաշտպանիչ համակարգ՝ պաշտպանություն բարձր մուտքային հզորությունից, բարձր լարումից, ֆիլտրի սխալ միացումից, գերտաքացումից, կարճ միացումից: Ռադիոկայանի և հզորության ուժեղացուցիչի համակցման կոմուտացիոն մալուխ ACC միացման խրոցով (mini DIN) տեսակի: Հոսանքի ծախսը հաղորդման ռեժիմում 2,2ԿՎ*ժամ: Լրակազմը՝ սնուցման մալուխ, բարձր հաճախականության մուտքի մալուխ 1մ, դիմադրությունը 50 օհմ, լայնատիրույթ դիպոլային ալեհավաք 1ԿՎտ հզորության:Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանը՝ -10C+60C: Արտադրության տարեթիվ 2016թ.:

52-րդ չափաբաժին՝ անվանումը՝ ռացիաներ (Ռադիոկայան թվային), ապրանքային նշանը՝ HYTERA PD685 , արտադրողի անվանումը՝ Hytera Communications Corporation Limited, ծագման երկիրը՝ Չինաստան, տեխնիկական բնութագիրը՝ Դյուրակիր ռադիոկայանի լրակազմ, Հաճախականությունների տիրույթը -136 – 174 ՄՀg, Հաճախականության ցանցի քայլը - 5 ԿՀg, Կապուղու հաճախականության լայնությունը - 12.5/20/25 ԿՀg, Ելքային հզորությունը -5Վտ, Թվային ընդունիչի զգայնություն - 0.22μV/BER 5%, Մարտկոց - BL1502 1500 մԱժ Li-Ion, Լիցքավորման սառք -CH10A07, Ալիքների քանակը -1024, 64 գոտի, Քաշը - 310 գրամ, գաբարիտային չափսեր - /մմ/

122x54x27, Դիսփլեյ - 160*128 պիքսել, 65536 գույն, 4.57 սմ, 4 տող, ռուսերեն լեզվով մենյու: Աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանի տիրույթը- -30'C+60'C: Ստանդարտներին համապատասխանություն- IP67, MIL-STD 810 C/D/E/F/G: Թվային պրոտոկոլ/արձանագրություն - ETSI-TS102 361-1,-2,-3 , Թվային վոկոդերի տեսակը - Ambre++ SELP: Ներկառուցված 256բիթ երկարության բանալու գաղտնագրում համատեղելի Hytera basic/advanced Encryption ստանդարտի հետ, Անալոգային և թվային կապուղիներով միաժամանակ աշխատելու հնարավորություն, MIX MODE, Pseudo Trunk, Remote monitor, Սմարթ Դիսպաչ համակարգին միացման և գործածման հնարավորություն: DMRA direct mode -2 խոսակցական կապուղու հնարավորություն վերահաղորդչի միջոցով և առանց վերաղորդչի: Կանչերի տեսակներ - Խմբային, Անհատական, Կանչ բոլորին: Ռադիոկայանի լրակազմը՝ Դյուրակիր ռադիոկայան, ալեհավաք AN0156H01, մարտկոց BL1502, լիցքավորման և հոսանքասնուցման սարքեր CH10A07, գոտուց ամրակ, օգտագործողի ձեռնարկ անգլերեն կամ ռուսերեն լեզուներով: Ամբողջ չափաբաժնի համար ծրագրավորման փաթեթ և 1 լրակազմ մալուխ: Արտադրության տարեթիվ 2017թ.:

Հանձնաժողովը 17.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստին թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 37-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի՝ մանավորապես ուժեղարարի անվանումը նշված չէ:

- 52-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէ արտադրողի կողմից հավաստացված ձևի (MFA) մասին տեղեկությունը:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը՝

- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 47-րդ կետը՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

- արձանագրել է, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները չեն շտկվել: Վերջինիս կողմից 20.04.2018թ. ներկայացվել է գրություն-բացատրագիր կապված շտկումը չներկայացնելու հետ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել:

- հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասը որոշել է՝ 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«Հենրի Ռադիո» ՍՊԸ-ն 19.04.2018թ. Պատվիրատուին ներկայացրել է գրություն-բացատրագիր, որով հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր՝ 17.04.2018թ. ծանուցագրի, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-1/3 ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնում եմ, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի էլ. փոստի հասցեին ուղարկված ծանուցագիրն անհայտ պատճառով հայտնվել է «spam» բաժնում և կնոջս մահվան պատճառով այն ընթերցվել է այսօր՝ 19.04.2018թ.:

Ձեր կողմից նշված չափաբաժիններում առկա թերությունների վերաբերյալ բացատրում եմ.

- 37-րդ չափաբաժնում ուժեղարարի անվանումը նշված չէ, քանի որ այն ներառված է VERTEX STANDART VX-1700 ռադիոկայանի լրակազմի մեջ և չունի առանձին մակնշում կամ անվանում, ինչպես նշված է մրցույթի հրավերում՝ ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան 1ԿՎ հզորության ուժեղացուցիչով):

- 52-րդ չափաբաժնում նշված չէ արտադրողի կողմից հավաստիացված ձևի (MAF) հավաստագիր սերտիֆիկատ արտադրողի կողմից, քանի որ, այն չենք դիտարկել տեխնիկական բնութագրի նկարագրի հատկանիշ, այլ՝ փաստաթուղթ, որը պարտավորվում ենք ներկայացնել մատակարարվող ապրանքի հետ միասին:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Պատվիրատուն արձանագրել է, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ և Պատվիրատուն առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա

անհամապատասխանությունները, այնուհետև արձանագրել է, որ Ընկերության կողմից ուղղարկվել է գրություն-բացատրագիրը սահմանված ժամկետի խախտումով, այն է՝ 20.04.2018թ.: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ 17.04.2018թ. Պատվիրատուի կողմից ուղղարկված ծանուցմանն ի պատասխան «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ն 19.04.2018թ. էլ. փոստի միջոցով ուղղարկել է գրություն-բացատրագիր, որով ներկայացրել է պարզաբանում 37-րդ և 52-րդ չափաբաժիններում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ, մասնավորապես Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ 37-րդ չափաբաժնում ուժեղարարի անվանումը նշված չէ, քանի որ այն ներառված է VERTEX STANDART VX-1700 ռադիոկայանի լրակազմի մեջ և չունի առանձին մակնշում կամ անվանում, իսկ 52-րդ չափաբաժնում (MAF) հավաստագիր բացակայությունը պայմանավորված էր նրանով, որ Ընկերության կողմից այն չի դիտարկվել տեխնիկական բնութագրի նկարագրի հատկանիշ, այլ՝ փաստաթուղթ, որը ներկայացվելու է մատակարարվող ապրանքի հետ միասին:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Պատվիրատուին 19.04.2018թ ուղղարկված. էլեկտրոնային նամակի կարճապատկերումը (screenshot):

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք նախկինում կատարած մատակարումների ժամանակ ներկայացրել են (MAF) հավաստագիր, Ընկերության ներկայացուցիչը հատնեց, որ նշված (MAF) հավաստագիրը իրենց կողմից միշտ ներկայացվել է ապրանքի մատակարաման փուլում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա

լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

- 13-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:
- 13-րդ հոդվածի՝ 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

• «Հենրի Ռադիո»» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուի էլեկտրոնային փոստին 19.04.2018թ. ուղղարկվել է գրություն-բացատրագիր նշված չափաբաժիններում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ:

• Հրավերի հավելված 1 տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցով պահանջվել է՝ Ռադիոկայաններ ԿԱ տիրույթի ռադիոկայան 1ԿՎ հզորության ուժեղացուցիչով:

• «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ն N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված Ռադիոկայաններ ԿԱ տիրույթի ռադիոկայան 1ԿՎ հզորության ուժեղացուցիչը ներառված է VERTEX STANDART VX-1700 ռադիոկայանի լրակազմի մեջ և չունի առանձին մակնշում կամ անվանում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ համապատասխանության սերտիֆիկատը ներկայացվում է պայմանագրի կատարման փուլում հետևաբար Ընկերության կողմից ներկայացվող հավաստագիրը պետք է ներկայացվեր պայմանագրի կատարման փուլում մատակարարվող ապրանքի հետ, այլ ոչ թե տեխնիկական բնութագրի ներկայացման փուլում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ի կողմից N 6.1 հավելվածով ներկայացված՝ ընթացակարգի 37-րդ և 52-րդ չափաբաժներով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով և Կարգով սահմանված պահանջներին, և Հանձնաժողովը, Ընկերության հայտը նշված պատճառաբանությամբ մերժելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.05.2018թ. թիվ 03/26-3/8687-18 գրությամբ «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ